«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Հոմանիշ եվ հականիշ բառերի նշանակությունը, գործառույթները, նրանց սահմանները տարրական դասարանների չափորոշչում եվ ծրագրում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Աբրահամյան

Ուսումնական հաստատություն՝ Մաստարայի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՁԱՓՈՐՈՇՉՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐՈՒՄ

1.1 Հոմանիշների և հականշների դերը կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման գործընթացում .....3 1. 2 Հոմանիշ և հականիշ բառերի ուսումնասիրման սահմաններն ու բովանդակությունը մայրենիի չափորոշչում, ծրագրերում 9

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1 Հոմանիշ, հականիշ բառերի արտացոլումը մայրենիի 1-4 դասարանների դասագրքերում 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ անձի ձևավորման և զարգացման գործընթացում անփոխարինելի է ուսուցման դերն ու նշանակությունը: Ուսուցման գործընթացում ձեռքբերած գիտելիքները նպաստում են աշակերտների բառապաշարի հարստացմանը, ստեղծագործական կարողության, աշխարհայացքի ձևավորմանը Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի տարրական դասարանների մայրենիի դասընթացին բնագրի շուրջ իրականացվող բառային աշխատանքը՝ հոմանիշների, հականիշների ուսումնասիրումը, որը էապես նպաստում է սովորողների բառապաշարի հղկմանն ու հարստացմանը:

Հոմանիշների, հականիշների կիրառումը խոսքում հնարավորություն է տալիս ընդլայնել սովորողների բառապաշարը, իսկ ուսուցչի համար այն արդյունավետ միջոց է հանդիսանում մայրենիի դասի ընթացքում անհասկանալի բառերը համապատասխան հոմանիշների միջոցով մեկնաբանելը:

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների դարում տնտեսական և շուկայական, մասնագիտական և կենսական հարաբերություններում կարևորվում են մարդու հաղորդակցական կարողությունները, որի բաղադրիչներից է բառապաշարը: Ըստ տարրական դպրոցի մայրենիի չափորոշչային պահանջների և առարկայական ծրագրի՝ կարևոր խնդիր է կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացումը, որին հասնելու հիմնական ուղիներից է հոմանիշների, հականիշների, նրանց նրբերանգների կիրառումը խոսքում: Այս կարողությունները նպաստում են սովորողների բառապաշարի հարստացմանն ուղղված արդյունավետ աշխատանքի իրականացմանը: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ այս աշխատանքի կազմակերպման մեթոդիկան առավելագույնս չի ապահովում ծրագրային խնդիրների լուծումը:

Այսպիսով, մեր թեմայի արդիականությունը պայմանավորված է նշված հանգամանքով:

Հետազոտության նպատակն է դպրոցականների բառապաշարի հարստացման հնարավորությունների ուսումնասիրությունն է հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման ճանապարհով ;

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈՄԱՆԻՇ ԵՎ ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԶԱՓՈՐՈՇՉՈՒՄ ԵՎ ԾՐԱԳՐՈՒՄ

1.1 Հոմանիշների և հականշների դերը կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման գործընթացում

Մարդու մտածողության զարգացման մակարդակի, զգացմունքների խորության կարևորագույն ցուցանիշներից մեկը նրա խոսքն է:

Դեռևս վաղ մանկության տարիներին երեխայի մեջ ծագում է հաղորդակցման պահանջմունք, որը տարիների ընթացքում աստիճանաբար ընդլայնվում է: Հետագայում այդ պահանջմունքի բավարարման համար մարդը կատարելագործում է իր խոսքը, ձգտում է տիրապետել լեզվի գանձերին: Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է նաև նշանավոր մանկավաժների կատարած ուսումնասիրությունները:

Խաչատուր Աբովյանը խոսքի ուսուցումը համարում էր մայրենի լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկը: <<Լեզուն,-գրել է Աբովյանը,-անշուշտ ամենաազնիվ գործիքն է, որի միջոցով մարդն իր ներքին հոգեվիճակն է արտահայտում այլ մարդկանց, առանց որի ոչ անհատը, ոչ էլ մանավանդ ժողովուրդը ի վիճակի չէ իր մտքերն ու զգացմունքները հաղորդելու ուրիշներին, մանավանդ ավանդելու հաջորդ սերունդներին: Լեզվի մեջ, որպես մաքուր հայելու մեջ, ցոլանում է ազգի առանձնահատկությունը>>:[1]

Խոսքի զարգացման համար Աբովյանը նպատակահարմար է համարել բանավոր պատմումները, տեսածի, զգացածի, մտացածի վերաբերյալ ազատ ու անկաշկանդ արտահայտվելը, որպեսզի դրանով իսկ մշակվի ու կատարելագործվի երեխայի բանավոր խոսքը:

Բանավոր խոսքի զարգացմանը վերաբերող հարցերին անդրադարձել է նաև հայ նշանավոր գրող և մանկավարժ Ղազարոս Աղայանը: Ինչպես երեխայի ընդհանուր մտավոր զարգացումը, այնպես էլ դրա համար միջոց ու հետևանք հանդիսացող խոսքի զարգացումը Աղայանը նմանեցնում է գոլորշու փոքրիկ ու աննշան շիթերից գոյացող ցողի մարգարտյա հատիկներին:

<<Ցողի կաթիլները միանգամից չեն գոյանում,-ասում էր Ղազարոս Աղայանը,-այլ սակավ առ սակավ, և մենք տեսնում ենք գեղեցիկ մարգարտյա հատիկներ: Այսպես է և աճում երեխայի մտավոր հասունացումը, որի նկատմամբ ամենօրյա ուշադրություն և հոգատարություն պետք է ցուցաբերել>>: [2]

Աղայանի կարծիքով աշակերտի բառապաշարը հարստացնելու, լեզուն ճոխացնելու համար, նախ և առաջ նրա միտքը պետք է հարստացնել դրանց համապատասխան ընկալումներով ու պատկերացումներով, հասկացություններով ու գիտելիքներով:

Աշակերտների խոսքի զարգացման մեթոդիկայի վերաբերյալ արժեքավոր և ուսանելի մտքեր է արտահայտել նաև 19-րդ դարի 70-80 ական թվականների նշանավոր մանկավարժ-մեթոդիստ Առաքել Բահաթրյանը: Ընդունելով, որ տարրական ուսուցումը,ըստ էության, մարդկային բոլոր կարգի ուսուցումների հիմքն է, Բահաթրյանը գտնում էր, որ տարրական ուսուցման հիմքն է մայրենի

---

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան ՀՍՍՀ ԳԱ 1950թ, էջ 45:

[22] Ղ. Աղայան, երկերի լիակատար ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ 1950թ, էջ 15:

լեզվի ուսուցումն է: <<Ինչ որ մայրն է տալիս յուր կաթով,- ասում էր Բահաթրյանը,- միևնույնն էլ ազգն է տալիս յուր լեզվովը երեխային>>:[3]

Բանավոր խոսքի ուսումնասիրման միջոցների թվում Բահաթրյանը հատուկ տեղ է հատկացրել բառային աշխատանքին, որպես բառապաշարի հարստացման ու մտածողության զարգացման միջոցի, կենդանի խոսքի ընդօրինակմանը, որպես լեզվական պատրաստի ձևերի սեփականման:

Խոսքի զարգացման համար կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակահատված է:

Հայոց լեզուն հարուստ է բառերով: Այնքան հարուստ, որ հաճախ մենք կարող ենք նույն նշանակության տարբեր բառեր օգտագործել: Ինչքա՜ն միապաղաղ ու անգույն կլիներ մեր լեզուն, եթե չլինեին իմաստով մոտ բառերը: Այդ բառերը զարդարում են խոսքը, դարձնում բազմազան, գեղեցիկ:[4]

Բառապաշարի հարստացման համար հիմնական աղբյուր է ընթերցանությունը, չնայած առօրյա կյանքը, երեխաների շփումը մեծերի հետ, տեղեկությունների հաղորդման բազմաթիվ այլ աղբյուրներ ևս կարևոր դեր են խաղում բառապաշարի հարստացման գործում: Խոսքի զարգացման միջոցների ու ձևերի համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում մայրենիի դասերին կատարվող **բառային աշխատանքը**, որը կարևորությունը մեծ է բառապաշարի հարստացման գործում:

Տարրական դասարաններում սովորողների բառապաշարի հարստացումը հիմնականում իրականացվում է մայրենիի (Ինքնուրույն ընթերցանության) դասաժամերին դասագրքերում զետեղված բնագրի շուջ աշխատանքի ժամանակ:

Սովորողների բառապաշարի զարգացումը մայրենիի դասի կարևորագույն խնդիրներից է: Ուսուցման գործընթացում բառապաշարի հարստացման և կատարելագործման հիմնական աղբյուրը ընթերցանությունն է, ընթերցածի վերարտադրությունը և ուսուցչի խոսքը: Անշուշտ, երեխայի խոսքի վրա ազդում է նաև շրջապատը, մամուլը, ծնողները, հեռուստատեսությունը և այլն:

Պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանը ևս անդրադարձել է բառային աշխատանքների ուղղություններին: Ըստ նրա տարրական դասարաններում կարդացած ստեղծագործության շուրջ իրականացվում են մի շարք աշխատանքներ, այդ թվում բառային աշխատանք, որի նպատակը անծանոթ բառերի, դարձվածքների բացատրությունն է, ծանոթ

---

[3]3 Ա. Բահաթրյան <<Ընթերցարանը և նորա նշանակությունը ժողովրդական դպրոցների մեջ>>Երևան, 1879, էջ 12:
[4]Մ. Ավագյան, «Պատկերազարդ բերականություն», , Երևան, 2004 թ., էջ28:

բառերի հոմանիշների և հականիշների ընտրությունն է, ծանոթ արմատներով նոր բառերի կազմումը և դրանց յուրացումն ու ակտիվացումը:[5]

Աղյուսակ 1.



[5] Ջ. Գյուլամիրյան <<Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա>>, Ջանգակ հրատ., Երևան 2015, էջ 116:

յուրացում

Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում կազմակերպվում են գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վրա՝ առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու:

Բառային աշխատանքի մեջ տարբերակվում է երեք ուղղություն՝ բառիմաստի բացատրում, որի նպատակը անծանոթ բառը ծանոթ ու հասկանալի դարձնելն է, արդեն ծանոթ բառերի հոմանիշների ու հականիշների հայտնաբերում, որի նպատակը մի կողմից բառիմաստի ըմբռման **խորացումն է**, իսկ մյուս կողմից՝ **բառապաշարի հարստացումը**, **խոսքի ճոխացումն է, սովորած բառի օգտագործումը խոսքի մեջ, որի նպատակը բառի սեփականացումն ու գործնականացումը**:

Տարրական դպրոցում լեզվական-քերականական գիտելիքները ուսուցանվում են առավելապես գործնական ճանապարհով, առանց գիտական սահմանումների:

Ուսումնասիրվող նյութը ճիշտ հասկանալու համար, ըստ էության, պետք է բացատրվեն նրանում հանդիպող բոլոր անծանոթ բառերը՝ լինեն դրանք գրական, բարբառային, թե օտար բառեր, սակայն ուսուցմանն համար յուրաքանչյուր դասին պետք է ընտրել 3-4 բառից ոչ ավելի, որպիսի երեխաներն ի վիճակի լինեն դրանք ճիշտ ընկալելու: Ուսուցման համար ընտրված այս բառերը ոչ միայն պետք է բացատրվեն, այլև օգտագործվեն երեխաների խոսքի մեջ, որոշվեն դրանց հոմանիշներն ու հականիշները, որպեսզի երեխաների բառապաշարը հետզհետե հարստանա, աստիճանաբար ընդարձակվի սովորած բառերի գործադրման ոլորտը:[6]

Առաջնային խնդիր է ստուգել, թե արդյոք երեխաները հասկացել են կարդացած բառերի իմաստը և կարող են գործածել խոսքում: Այդ նպատակով առաջին հերթին պետք է առաջարկել բառերը գործածել բառակապակցությունների, նախադասությունների, կապակցված խոսքի մեջ:

Այս հնարը նպաստում է նորածանոթ բառերը խոսքում ըստ իմաստի ճիշտ գործածելու, այլ բառերի հետ կապակցություններ ստեղծելու կարողությունների ձևավորմանը: Այս ուղղությամբ կազմակերպվող աշխատանքները պետք է

---

[6] Ա. Տեր-Գրիգորյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>Երևան 1980, էջ 417:

ձևակերպել այնպես,որ աշակերտները բառերը ոչ թե պարզապես գործածեն խոսքում, այլ իրականացնեն մտավոր որոշ գործողություններ:

Սկսած առաջին դասարանից ուսուցիչը աշակերտների ունեցած բառի իմաստային կողմի ընկալման ունակությունը զարգացնելու նպատակով բազմաբնույթ վարժություններ է կատարում՝ ծանոթ բառերին իմաստով մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառեր գտնելու ուղղությամբ: Բառային աշխատանք կատարելիս աշակերտները ոչ միայն հասկանում ու բացատրում են ընթերցած նյութում եղած իրենց համար անծանոթ բառերը, այլև սովորում են դրանք օգտագործել խոսքում կամ դրանցով նախադասություններ կազմել, գտնում այդ բառերին իմաստով մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառերը:

Հոմանիշների ուսումնասիրումը կրտսեր դպրոցում ունի գործնական ու ճանաչողական արժեք և գործուն բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկն է: Անհրաժեշտ է նկատի ունենալ հոմանիշների գործածության մի այլ կողմ ևս. խոսքը վերաբերում է այն իրողությանը, որ իմաստային միևնույն շարքի հոմանիշները կարող են գործածվել միայն տարբեր բառական միջավայրում, կապակցվել տարբեր բառերի հետ: Երեխաներն իրենց խոսքում հականիշներ գործածում են դեռևս նախադպրոցական տարիքից: Դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից մայրենիի դասերին այս կարողությունն աստիճանաբար զարգանում է: Թեև աշակերտները հականիշների հանդիպում են դեռևս գրաճանաչության շրջանում՝ այբբենարանի նյութերն ընթերցելիս, սակայն հականիշների շուրջ համակարգված աշխատանքը սկսվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծությունից, որից հետո կիրառվում է հատուկ վարժությունների համակարգ:

Հականիշ բառերն իրենց վառ արտահայտչականությամբ, ասելիքի շեշտակիությամբ ու դիպուկությամբ միշտ էլ կենսունակ ոճական միջոց են եղել թե՛ հին, թե՛ միջին և թե նոր դարերի պոեզիայում ու արձակում: Այստեղ, բացի արտահայտչականության ու դիպուկության գործոնից, թերևս դեր ունի նաև սեղմության, համառոտության գործոնը, որը, բնականաբար, նվազ Էական հանգամանք չէ: Հականիշներն իրենց ընդհանուր տեսակարար կշռով (որակապես, թե քանակապես) զիջում են միայն հոմանիշներին:[7]

Կրտսեր դպրոցականները խոսքում ավելի շատ օգտագործում են տարարմատ հականիշները, որովհետև հականշային այդ զույգերը կազմելիս

[7] Ս. Գ. Աբրահամյան <<Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն>> Երևան, 1976թ:

առավելագույնս նրանք օգտագործում են իրենց կոնկրետ մտածողությամբ պայմանավորված բառապաշարի առավել ակտիվ բառերը: Սակայն, երբ երկրորդ դասարանում սովորողները յուրացնում են ժխտական ն ա խ ա ծա նցներով նոր բառեր կազմելու ձևերը, սկսում են առավելությունը տալ այդ ածանցներն ունեցող բառերով կազմված հականշային զույգերին: Հականշային զույգերի կազմման այդ եղանակը հետագայում այնքան է մատչելի դառնում աշակերտներին, որ հաճախ ուսուցիչները ստիպված են լինում խնդրել, որ աշակերտները կազմեն տարարմատ հականշային զույգեր (անշուշտ առանց եզրույթի օգտագործման):

Հականիշները ոճական, արտահայտչական բավական մեծ դեր են կատարում լեզվում: Արտացոլելով արտաքին աշխարհի երևույթների, իրողությունների միջև դրսևորվող կապերն ու հարաբերությունները՝ նրանք լեզվի արտահայտչական կարևորագույն միջոց են և ամենալայն հնարավորություններ են ընձեռում՝ ամենաբազմազան համեմատություններ անելու, տարաբնույթ հակադրություններ ու հակասություններ արտահայտելու, ինչպես նաև խոսքը պատկերավոր, հմայիչ ու ազդեցիկ դարձնելու համար):

Բառապաշարի հարստացման և ճշգրտման ուղղությամբ իրականացվող աշխատանքիմեջ մտնում են նաև **հոմանիշների և հականիշների** յուրացման հետ կապված տարաբնույթ վարժությունները:

Աղյուսակ 2.



Գեղարվեստական բնագրերում բառերը և դրանց կապակցությունները հաճախ ձեռք են բերում լրացուցիչ, այլիմաստային դեր՝ ստեղծելով պածառ կերպարներ: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործություններում բազմաթիվ են այդպիսի բառերն ու արտահայտությունները: Անհրաժեշտ է օգտագործել կրտսեր դպրոցականներին մատչելի բոլոր հնարները՝ ինչպես ստեղծագործության գեղարվեստական միջոցների ուսումնասիրման (համեմատություններ, հոմանիշներ, հականիշներ և այլն). այնպես էլ դրանք երեխաների խոսքի ակտիվ մասը դարձնելու համար:

1.2 Հոմանիշ և հականիշ բառերի ուսումնասիրման սահմաններն ու բովանդակությունը մայրենիի չափորոշչում, ծրագրերում

Հանրակրթական դպրոցում ուսուցման հիմնական խնդիրն է զարգացնել սովորողների լեզվագործածական ունակությունները՝ հասարակական կյանքում լիարժեք հաղորդակցվելու նպատակով:

Մայրենի լեզուն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ այն միաժամանակ և ուսումնասիրության առարկա է, և մյուս առարկաների յուրացման միջոց: Մայրենի լեզվի՝ որպես դասավանդման առարկայի, մյուս յուրահատկությունն այն է, որ նա ներառում է երկու կողմ՝ բուն լեզվի իմացություն, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք ստեղծելու կարողություն և լեզվի ֆերականական կառուցվածքի իմացություն, որը ենթադրում է տեսական լեզվաբանական գիտելիքներ:

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես տարրական դպրոցում: Հայերենի դասընթացը ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոցն է, քանի դեռ սովորողները չեն անցնում առանձին մասնագիտական առարկաներ: Հետևաբար ընթերցանության հյութերը սովորողների լեզվաֆերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների, լեզվական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերումը:

Դեռևս տարրական դպրոցում սովորողները գործնականորեն ծանոթանում են լեզվի հիմնական միավորներին, բերականական և ուղղագրական իրողություններին (առանց սահմանումների), որոնց վերաբերող գիտելիքները խորացվում և ընդլայնվում են հաջորդ՝ ավելի բարձր դասարաններում՝ կրթական մակարդակին համապատասխան գիտական բնութագրումներով և խոսքի մեջ կիրառելու գործնական վարժություններով:

Մայրենիի առարկայական չափորոշչի հիման վրա ստեղծվել են առարկայական ծրագրեր՝ յուրաքանչյուր դասարանի համար, որտեղ նշվում է, թե աշակերտները ինչ գիտելիքներ պետք է ձեռք բերեն ուսումնական տարվա ընթացքում:

Ուսումնասիրելով տարրական դասարանների գործող ծրագրերը՝ պարզ է դառնում, որ սովորողները հոմանիշ, հականիշ բառերի հետ առնչվում են դեռևս գրաճանաչության նախաայբբենական շրջանում՝կատարելով տարաբնույթ վարժություններ:

Առարկայական նկարների բազմազանության մեջ որոշում են առարկաների նմանություններն ու տարբերություններն ՝մեծ-փոքր, սիրուն, ինչը նպաստում է սովորողների մեջ համեմատելու հակադրելու կարողության ձևավորմանը:

Լեզվական նյութը ներմուծվում է ոչ թե լեզվական մակարդակների հերթականության (գծային սկզբունքով), այլ ըստ մատչելիության, խոսքում գործածվելու հաճախականության, կապակցված խոսք կառուցելուն նպաստելու դերի[a] ելնելով լեզվի գործնական ուսուցման և հաղորդակցական կարողությունների զարգացման պահանջից£

Ծրագրում այբբենական և հետայբբենական շրջաններն ուսումնասիրելիս ևս ակնհայտ է դառնում հոմանիշ և հականիշ բառերի կարևորությունը բնագրի շուրջ տարվող աշխատանքների կազմակերպման և բառապաշարի հարստացման գործում՝ լսելով և վերարտադրելով ունկնդրած հեքիաթի կամ պատմվածքի բովանդակությունը: Որպես լեզվական տարրական գիտելիք առաջին դասարանի ծրագրում հստակ գաղափար է տրված բառախմբերի՝ ընդհանուր և մասնավոր, մոտ և հակառակ իմաստներ ունեցող բառերի (հոմանիշ և հականիշ) վերաբերյալ:

Այս ամենի մասին գաղափարը տրվում է ճանաչողական և կիրառական բնույթի վարժությունների միջոցով:

Ըստ գործող ծրագրի առաջին դասարանում մայրենիի դասին հատկացվում է շաբաթական 7, տարեկան 210 ժամ: 161 ժամը տրամադրվում է գրաճանաչությանը՝ (նախաայբբենական շրջան 42 ժամ, այբբենական շրջան 112 ժամ): Հետայբբենական շրջանում, որին համածան ծրագրի նախատեսված է 7 ժամ:

Աղյուսակ 3.

Ուսուցանվող նյութը	Ուսուցման նպատակը	Գործունեության տեսակները
▪ Բառախմբեր. ընդհանուր և մասնավոր անվանումներ, մոտ և հակառակ իմաստներ ունեցող բառեր (հոմանիշ և հականիշ. ծանոթացում առանց անվանելու)	▪ Բառերի իմաստները ընկալելու և խոսքում դրանք ճիշտ գործածելու կարողությունների ձևավորում	▪ Կատարել ճանաչողական և կիրառական բնույթի վարժություններ

Ուսումնասիրելով երկրորդ դասարանի Մայրենիի ծրագիրը, պարզ է դառնում, որ առարկայի համար նախատեսված է շաբաթական 7, տարեկան 210 ժամ: Ուսուցանվող նյութերից է տեքստի նորածանոթ բառերի առանձնացումը և իմաստի ընկալումը: Աշխատանք է տարվում խոսքի ակտիվ բառապաշարի հարստացման ուղղությամբ:

Ուսումնասիրելով երկրորդ դասարանի ծրագիրը՝ տեսնում ենք, որ լեզվական տարրական գիտելիքների մեջ է մտնում հասկացություն բառի իմաստային գործածության մասին. հոմանիշ և հականիշ բառեր:

Հոմանիշի և հականիշի ուսուցմանը վերաբերող առաջադրանքներում օգտագործվում են մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառերը: Նրանց վերաբերյալ կատարվում են կիրառական և մարզողական վարժություններ.

Աղյուսակ 4.

Ուսուցանվող նյութը	Ուսուցման նպատակը	Գործունեության տեսակները

▪ Տեքստի նորածանոթ բառերի առանձնացում և իմաստի ընկալում	▪ Խոսքի ակտիվ բառապաշարի հարստացում տեքստի նորածանոթ բառերով և դրանց հոմանիշներով	▪ Վերարտադրել կարդացածի բովանդակությունը՝ պահպանելով շարադրանքի տրամաբանական հաջորդականությունը՝ օգտագործելով նոր սովորած բառերը[9]

Երրորդ դասարանի մայրենիի ծրագրում տեսնում ենք, իբրև տարրական գիտելիքներ տրված են հոմանիշ և հականիշ բառերը:

Երրորդ դասարանում մայրենիին նախատեսված է շաբաթական 8, տարեկան, 272 ժամ: Լեզվական տարրական գիտելիքներ. Կրկնում են առաջին և երկրորդ դասարանի անցած նյութերը: Հոմանիշ և հականիշ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ: Նպատակն է լեզվի բառապաշարի հանդեպ հետաքրքրության ընդլայնում՝ բառերի իմաստների և դրանց միջև առկա հարաբերությունների բացահայտման միջոցով:

Աղյուսակ 5

Ուսուցանվող նյութը	Ուսուցման նպատակը	Գործունեության տեսակները
▪ Հոմանիշ և հականիշ բառեր	▪ Լեզվի բառապաշարի հանդեպ հետաքրքրության ընդլայնում՝ բառերի իմաստների և դրանց միջև առկա հարաբերությունների բացահայտման միջոցով	▪ Ճանաչողական, կիրառական և ստեղծագործական բնույթի վարժություններ (անհատական կամ խմբային աշխատանքի համար).

[9] Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրեր, Երևան <<Անտարես>> 2011թ:

	▪ Բառագործածության կարողությունների զարգացում և ակտիվ բառապաշարի հարստացում ▪ Խոսքային գործունեության զարգացում և ճանաչողական հետաքրքրությունների ընդլայնում	– որոշել տրված բառերի իմաստները և տեղադրել համապատասխան նախադասությունների մեջ, – տրված հոմանիշների շարքում գտնել ավելորդ բառը, – տրված բառաշարքերից ընտրել հոմանիշ և հականիշ բառերի զույգեր և գործածել տարբեր նախադասությունների մեջ ▪ Դասանյութից առանձնացնել բառեր և փոխարինել հոմանիշներով (կամ հականիշներով)՝ ուշադրություն դարձնելով նախադասության մտքի փոփոխությանը ▪ Համագործակցելով ընկերների հետ՝ կազմել նկարագրական բնույթի տեքստ, ընդգծել բնութագրող բառերը և կազմել դրանց հոմանիշների շարքը
Ածականների գործածությունը գոյականների հետ	Հոմանիշ և հականիշ ածականների ուսուցում և խոսքում դրանք ճիշտ օգտագործելու կարողության մշակում	● Հոմանիշ ածականները գործածել նախադասությունների մեջ, համեմատել և նշել դրանց ոճական տարբերությունը ● Փոքրածավալ տեքստի ածականները փոխարինել հականիշներով, գրի առնել, ընթերցել և համեմատել տրված տեքստի հետ

Ուսումնասիրելով մայրենի լեզու **չորրորդ դասարանի** առարկայի ծրագիրը՝ տեսնում ենք, որ կրկնվում է երկրորդ և երրորդ դասարանի անցած նյութը: Նպատակը բառի արտահայտչական հնարավորությունները ճանաչելու և խոսքում կիրառելու կարողությունների ձևավորումն է: Հոմանիշ, հականիշ ածականների յուրացում և խոսքում ճիշտ օգտագործելու կարողության մշակում:

Չորրորդ դասարանում հոմանիշ, հականիշի ուսումնասիրման, խոսքի հարստացման համար առաջարկվում են մի շարք կիրառական և մարզողական վարժություններ:[10]

Աղյուսակ **6.**

Ուսուցանվող նյութը	Ուսուցման նպատակը	Գործունեության տեսակները
II-III դասարաններում անցածի կրկնություն	Անցած լեզվական գիտելիքների ամրակայում և խորացում	• Տրված գոյականներից յուրաքանչյուրի հետ գործածել հոմանիշ և հականիշ բառեր • Բառախմբից առանձնացնել հոմանիշ գոյականները • Տեքստում գտնել փոխաբերական իմաստով գործածված բառերը և ասել դրանց հոմանիշները

Ուսումնասիրելով տարրական դպրոցի մայրենիի ծրագրերը՝ պարզ է դառնում, որ հոմանիշ և հականիշ բառերի ուսումնասիրումը կատարվում է երկու փուլով՝ նախագիտելիք և տարրական գիտելիք:

Հոմանիշ և հականիշ բառերի ուսումնասիրման բովանդակությունը հանրակրթական դպրոցի 1-4 դասարանի մայրենիի չափորոշչում.

ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ	ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ
1.ճանաչել հակառակ իմաստ արտահայտող բառերը	2.տարբերել հոմանիշ և հականիշ բառերը	3. խոսքում ճիշտ կիրառել բազմիմաստ բառերը[11]

[10] Հայոց լեզու և գրականության, Հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրեր, Երևան, <<Անտարես>> 2011թ.:

[11] Հայոց լեզու, գրականության, Հանրապետության պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան <<Անտարես>> 2004թ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1 Հոմանիշ, հականիշ բառերի արտացոլումը մայրենիի 1-4 դասարանների դասագրքերում

Ուսումնասիրելով 1-4 դասարանների մայրենիի դասագրքերը՝ փորձեցինք պարզել, թե հոմանիշ, հականիշ բառերի ուսումնասիրումն ինչպես է կատարվում 1-4 րդ դասարաններում, ինչպիսի առաջադրանքներ կան: Նշենք, որ գոյություն ունեն մայրենիի այլընտրանքային դասագրքեր. դպրոցն է ընտրում, թե որ դասագրքերով պետք է սովորեն աշակերտները:

Առաջին դասարանի դասագրքերը՝ «Այբբենարանը» և «Մայրենի 1», ուսումնասիրելով տեսնում ենք, որ փոքրիկ ստեղծագործություններում կան այնպիսի բառեր, որոնց բացատրությունը տրվում է համապատասխան հոմանիշների միջոցով:

«Մայրենի 1»-ում հանդիպում ենք հոմանիշներին և հականիշներին վերաբերող այսպիսի առաջադրանքների՝

Ընդգծված բառերի փոխարեն գրի՛ր իմաստով մոտ բառեր.

1. զով այգի, դալար ճյուղ, նախշուն թիթեռ, փոքրիկ շնիկ, աշխատասեր տղա, անուշ մայրիկ

Օրինակ՝դալար ճյուղ-կանաչ ճյուղ:

2.Կարո՞ղ ես հանելուկի մեջ հակառակ իմաստ ունեցող բառեր գտնել: Գրի՛ր դրանք զույգերով:

Շոգին, թե ցրտին

Ունեմ ձյունե թագ,

Երկու եղբայր են՝

Կրտսեր ու ավագ։[12]

Ուսումնասիրելով մայրենիի երկրորդ դասարանի դասագիրքը՝ հոմանիշ և հականիշ բառերի ուսումնասիրման վերաբերյալ ևս հանդիպում ենք մի շարք առաջադրանքների։ Աշակերտները դեռ ծանոթ չեն հոմանիշ, հականիշ տերմիններին, սակայն հրաշալի հասկանում են, թե ինչ է նշանակում բառերի մոտ կամ հակառակ իմաստ ունենալ։ Երբեմն հոմանիշ բառերի փոխարեն օգտագործում են ընկեր բառեր, մտերիմ բառերը։

Երկրորդ դասարանի մայրենիի դասագրքերում՝ հոմանիշ, հականիշ բառերի ուսումնասիրման ընթացքում, կարելի է հանդիպել հետևյալ առաջադրանքների՝

1. Տրված երկու շարք բառերի միջից գտի՛ր իրար հակառակ իմաստ ունեցող բառերը և գրի՛ր օրինակի պես.

չար, շատ, վերցնել, գիշեր, մոտ, վրա, հիմար, բացել, ֆնել, ուրախություն, հիվանդ

առողջ, դնել, հեռու, տակ, ցերեկ, փակել, արթնանալ, տխրություն, բարի, ֆիշ, խելացի.

օրինակ՝ վերցնել-դնել։

2. Տրված բառերից յուրաքանչյուրի համար գրի՛ր հակառակ և մոտ իմաստ ունեցող մեկական բառ.

գեղեցիկ, փոքրիկ, ուրախ, կամաց, մեծ, ուղիղ, ֆաղցր, ժիր, անվախ, ջինջ.

օրինակ՝ կամաց-արագ-դանդաղ։

Երրորդ դասարանի մայրենիի դասագրքի առաջին մի քանի էջերում կիրառվում են իմաստով մոտ և հակառակ իմաստն արտահայտող հասկացությունները։

Հանդիպում ենք նմանատիպ առաջադրանքների.

զգաթ և սար բառերին իմաստով մոտ (հոմանիշ) բառեր գրի՛ր։

Հին, խոնավ,լավ, հաճելի, գոհ բառերի հակառակ իմաստն արտահայտող բառեր (հականիշեր) գրի՛ր։

Ինչպես նկատում ենք հոմանիշ և հականիշ բառերի փոխարեն սկզբում օգտագործում են իմաստով մոտ և հակառակ բառերը, իսկ ավելի ուշ՝ հոմանիշ և հականիշ բառերը։

1. Գրի՛ր ջերմ, պես, փրկել և տխրել բառերի հականիշները։

Հետաքրքրական է նաև այն, որ դասագրքի բնագրերում կապույտ երանգով առանձնացված են այն բառերը, որոնք աշակերտները օգտագործում են հոմանիշների զույգեր կազմելիս։

2. Գրի՛ր կապույտով գրված բառերի հականիշները։

Նամակում (՛՛Հոր նամակը, Էդմոնդո դե Ամիչիս) գտի՛ր տրված բառերի հոմանիշները՝ (դրանք կապույտով են գրված) անքաղաքավարի, թույլ տալ, երախտամոռություն, խնդրել, խորհել, մաքրել։

---

[12] Ա. Ն. Քյուրքչյան, Լ.Ա. Տեր-Գրիգորյան, «Մայրենի 1», Երևան 2016։

Առաջարկվում են նաև մի շարք հետաքրքիր, բառապաշարը հարստացնող, ուշադրությունը կենտրոնացնող առաջադրանքներ.



Բառերի գանձատուփ

1. Դարան մտնել նշանակում է «թաքնվել՝ հակառակորդի հարձակվելու համար»: Իսկ ինչ են նշանակում՝ ա) փուլ գալ, բ) կախ ընկնել, գ) միտք անել, դ) սիրտը լցվել, ե) ձայն տալ:

2. Գտիր ջահել, անվանի, տանջել, սիրուն բառերի հոմանիշները:

3. Գտիր ջահել, հաջորդ, բարակ, սիրուն, անմեղ բառերի հականիշները:

4. Տրված բառերից որը հոմանիշ չէ նախատել բառին. հանդիմանել, կշտամբել, մղկտալ:

5. Պատմվածքում ինչ բառերով են բնութագրվում՝ ա) մարդը, բ) ձագուկը, գ) բնությունը, դ) մայր կխտարը:

4. ա. Առակի սկզբնամասում հոմանիշ բառերի մեկ զույգ գտի՛ր:

բ. Առակի առաջին երեք նախադասությունների մեջ հականիշ բառերի մեկ զույգ գտի՛ր:

Առյուծն ու մուկը

Առյուծը քնած էր: Հանկարծ մի մուկ բարձրացավ նրա մարմնի վրա: Առյուծն իսկույն զարթնեց և բռնեց մկանը: Մուկը սկսեց աղաչել առյուծին, որ իրեն բաց թողնի:

5. Քամի նշանակող ի՞նչ բառեր գիտես:

6. Գրի՛ր ճիշտ, գտնել, ուրախություն, դժբախտություն բառերի հականիշները: Հականիշների մի զույգը գործածիր միևնույն նախադասության մեջ:

7. Տրված բառերից, որը հոմանիշ չէ նախատել բառին. հանդիմանել, կշտամբել, մղկտալ:

8. Արշալույս նշանակում է«արևածագ, լուսաբաց», իսկ ի՞նչ կնշանակի վերջալույս:

Դասագրքի յուրաքանչյուր բնագրից հետո առաջադրված վարժություններից 2-3-ը վերաբերում է հոմանիշի, հականիշ բառերի ուսումնասիրմանը:

10. Սյունակներից ընտրի՛ր և զույգ-զույգ գրի՛ր հոմանիշ բառերը.

հրճվանք անմիջապես

իսկույն կտոր

պատառ ուրախություն

ճախր լուսամուտ

պատուհան թռիչք

11. Շարքերից ընտրի՛ր և զույգ- զույգ գրի՛ր հականիշ բառերը.

հաճախ փոքրիկ շնորհակալ խաղաղ ուրախանալ

մեծ տխրել անհանգիստ ապերախտ հազվադեպ:[13]

12. Թողիչ բառի հոմանիշներն են գրավիչ, հմայիչ, կախարդական: Դրանցից մեկը գործածիր նախադասության մեջ:

Ուսումնասիրելով չորրորդ դասարանի մայրենիի դասագիրքը՝ տեսնում ենք, որ առաջադրանքների բաժնում մեծ տեղ է հատկացված հոմանիշ, հականիշ բառերի ուսումնասիրման շուրջ տրվող առաջադրանքներին: Ահա դրանցից մի քանիսը՝

Հովն էլ անուշ մայրիկիս

Նուշ համբույրն է ինձ բերում:

1. Հով նշանակում է <<թեթև քամի, հովիկ>> և <<զով, սառը>>: Բառը, ո՞ր իմաստով է գործածվել բանաստեղծության մեջ:

2. Գրի՛ր ճնճուղ, լուռ,շող, ուրախ, հավետ բառերի հոմանիշները, դրանք գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ:

3. Աջ կողմից գտի՛ր ձախ սյունակում գրվածների հոմանիշները:

զսվել	հորդել, ցայտել
բխել	նիրհել, քնել
ննջել	շողալ, ցոլալ
նեղել	մաքրվել, պարզվել
փայլել	անհանգստացնել, տանջել

ա)Կարդա՛ իմաստով մոտ այս բառերի շարքերը.

մտածել–մտորել, խորհել, մտմտալ, կշռադատել

լալ–արտասվել, հեկեկալ,հեծկլտալ, ողբալ:

բ) Յուրաքանչյուր շարքից առանձնացրո՛ւ այն բառը, որը գործածվել է բանաստեղծության մեջ:

գ) Հոմանիշների յուրաքանչյուր շարքից մեկ բառ առանձնացրու՛ և գործածի՛ր նախադասության մեջ:

4. Հուրթի այգիներից լիության անուշ բուրմունք էր խնկում նախադասության մեջ մի բառ հոմանիշ է պտղաբեր, բերքառատ, փարթամ, բարեբեր բառերին: Ո՞րն է այն:

5. Վեհ բառի երկու հոմանիշ գրի՛ր:

Տեքստի մեջ գտի՛ր այն նախադասությունները, որոնցում գործածված է հստակ բառը: Նույն իմաստն են արտահայտում: Տեսակետդ հիմնավորիր:

6. Մեր թագավորը թող շատ ապրի արտահայտության հոմանիշը գտի՛ր հեքիաթում:

---

[13] Դավիթ Գյոբջինյան, Նարինե Հեքեքյան, <<Մայրենի 3>> Երևան, 2017:

7. Տարվել նշանակում է <<պարտվել>> և <<գերվել, կախարդվել>>: Բառը որ իմաստով է գործածվել Այնպես տարվեցի այս ամենով, որ որոշեցի բակի ամենաուժեղ մարդը դառնալ նախադասության մեջ:

Ի՞նչ նոր բառեր սովորեցիր այս ուսումնական տարում: Փորձի՛ր հիշողությամբ գրել դրանք և համեմատիր ընկերներիդ կազմած բառացանկերի հետ: [14]

Այսպիսով, ուսումնասիրելով մայրենիի առաջինից չորրորդ դասարանների դասագրքերը, պարզ է դառնում, որ հոմանիշ, հականիշ բառերի ուսումնասիրմանը կարևոր տեղ է հատկացվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բառապաշարի հարստացման ուսումնասիրությանն ուղղված ծավալուն անդրադարձ ենք նկատել առկա մասնագիտական գրականության մեջ. այս հիմնախնդիրը մշտապես եղել է լեզվաբանների և մեթոդիստների ուշադրության կենտրոնում, ովքեր հրատարակել են բազմաթիվ աշխատություններ, ինչպես նաև մեթոդական գրականության մեջ բազմաթիվ տեսակետներ են ներկայացրել, թե ինչպես կարելի է ուսումնասիրել հոմանիշ, հականիշ բառերը տարրական օղակում, սակայն մանրամասն անդրադարձ չի կատարվել, թե ինչ աշխատանքներ կազմակերպել այս թեմայի յուրացումն առավել արդյունավետ դարձնելու և դրա միջոցով սովորողների բառապաշարը հարստացնելու ուղղությամբ:

2. Համաձայն մայրենիի առարկայական չափորոշչի և ծրագրի՝ տարրական դասարաններում բնագրի շուրջ իրականացվող աշխատանքի ընթացքում հոմանիշ, հականիշ բառերը ուսումնասիրվում են բոլոր դասարաններում, և չափորոշչում սահմանված է, թե կրտսեր դպրոցականը որքանով պետք է յուրացնի թեման: Ուսումնասիրության համար մայրենիի դասագրքում ներառված են առաջադրանքներ՝ համաձայն

[14] Մայրենի 4, Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան, Երևան 2018:

պարուրածև սկզբունքի, որոնք որոշ չափով նպաստում են ուսումնասիրության խնդիրների լուծմանը և չափորոշչային պահանջներին:

3. Բացահայտեցինք, որ մայրենիի դասաժամերի տարբեր փուլերում, տարբական գիտելիքների ուսումնասիրության գործընթացում կիրառվող տարաբնույթ մեթոդների, վարժությունների համակարգի և մեթոդական հնարների կիրառությունը նոր սովորած բառերի յուրացումը դարձնում են ավելի արդյունավետ և հետաքրքրաշարժ, խոսքը դարձնում են ավելի արտահայտիչ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Աբովյան. Խ. Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1950թ:

2.Աբրահամյան Ս. Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն, ԳԱԱ հրատ., Երևան1976թ:

3. Աբրահամյան Ս. Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան <<Լույս>> 1969թ:

4. Աղայան Ղ., երկերի լիակատար ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1950թ:

5. Ավագյան Մ., Պատկերազարդ բերականություն, Երևան, <<ՀԱՇ ԸՆԴ ՀԱՇ ՓՐԻՆԹ >>, 2016 թ:

6. Բահաթրյան Ա. Ընթերցարանը և նորա նշանակությունը ժողովրդական դպրոցների մեջ, Երևան <<Մանկավարժական թերթ>>, 1879:

7. Գյուլամիրյան Ջ. Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, <<Զանգակ>> 2018թ:

8. Գյուլամիրյան Ջ. Խոսքի զարգացումը, Երևան <<Զանգակ>>, 2014թ:

9.Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Երևան << Էդիթ պրինտ>>, 2017թ.:

10. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Երևան <<Էդիթ պրինտ>> 2018թ:

11. Տեր-Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան <<Լույս>> 1980թ:

12. Քյուրքչյան Ա. Ն, Տեր-Գրիգորյան Լ.Ա <<Այբբենարան>>, Երևան 2016:

13. Քյուրքչյան Ա. Ն, Լ.Ա. Տեր-Գրիգորյան, Մայրենի 1, Երևան 2016 Էդիթ պրինտ:

14.Հայոց լեզու, գրականության, Հանրապետության պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, <<Անտարես>> 2004թ:
15. Հայոց լեզու և գրականության, Հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրեր, Երևան <<Անտարես>> 2011թ: